

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացու-
թյունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լարիսա
Ալավերդյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հան-
րապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հան-
րապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ Հայաստանի Հանրա-
պետության քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչելու
անհրաժեշտությունը չկա, քանի որ նշված հոդվածի 1-ին մասը լիովին համապատասխանում է
Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 6-րդ և 63-րդ հոդվածների պահանջ-
ներին, որոնք սահմանում են դատարանը հարգելու պարտականությունը և կարգավորում դա-
տարանի կողմից կիրառվող սանկցիաների հետ կապված հարաբերությունները: Նմանատիպ
դրույթներ սահմանված են նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարու-
թյան օրենսգրքի 54-րդ, 59-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներով: Միաժամանակ անհրաժեշտ է

նկատի ունենալ այն հանգամանքը, որ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, դատական սանկցիայի կիրառումը արգելք չէ սանկցիայի ենթարկված անձին օրենքով նախատեսված այլ պատասխանատվության միջոցների ենթարկելու համար: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչելու դեպքում խախտվում է նշված հոդվածի ամբողջականությունը, քանի որ այդ հոդվածի 1-ին մասի դրույթները հիմնականում վերաբերում են դատավորի կարգադրությանը չենթարկվելուն կամ դատական նիստի կարգը խախտելուն, իսկ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը վերաբերում են դատաքննության մասնակիցներին վիրավորելուն կամ պաշտոնեական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելուն:

Ինչպես երևում է, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածը կառուցվածքային և բովանդակային առումով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի ու Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին և հստակ կարգավորում է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու հետ կապված հարաբերությունները:

Ելնելով շարադրվածից՝ նպատակահարմար ենք գտնում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ, որի համաձայն դատարանի կարգադրությունները և որոշումները կատարելու հարցում դատավարության մասնակիցները, գործին մասնակցող անձինք և դատական նիստին ներկա գտնվող այլ անձինք կունենան հավասար կարգավիճակ:

Այդ առումով առաջարկում ենք նշված հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է դատարանի կարգադրությանը կամ որոշմանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը

խախտելով կամ այլ գործողություն կատարելով և վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:»:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գ. Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-750-30.10.2009-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու
մասին**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին) 343-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու
մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտության**

Քննարկվող 343-րդ հոդվածը տեղավորված է Քրեական օրենսգրքի «Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում եւ բնականաբար պետք է նպատակաուղղված լինի քրեական պատժի սպառնալիքով արդարադատության պատշաճ իրականացման ապահովմանը: Հոդվածը վերնագրված է «Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը»:

Հոդվածի 1-ին մասը, որն առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել, շարադրված է հետեւյալ բովանդակությամբ.

«Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևւորվել է վկայի կամ տուժողի կամ պաշտպանի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելով կամ դատավորի կարգադրությանը չենթարկվելով կամ դատական նիստի կարգը խախտելով կամ այլ գործողություն կատարելով եւ վկայում է դատարանի կամ դատական նիստի կարգի նկատմամբ բացահայտ արհամարհանքի մասին՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով»:

Որպես հողվածի այս մասում նկարագրված հանցագործության սուբյեկտներ թվարկված են՝ վկան, տուժողը եւ պաշտպանը: Անհասկանալի տրամաբանությամբ դատավարության մյուս մասնակիցները՝ դատական նիստերի քարտուղար, մեղադրող, քաղ. հայցվոր, քաղ. պատասխանող, վերջիններիս ներկայացուցիչները, դատական նիստին ներկա գտնվող այլ անձիք տվյալ հանցագործության սուբյեկտ չեն հանդիսանում, բավարար է համարվել նրանց նկատմամբ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված սանկցիաների կիրառումը՝ նախագգուշացում, նիստերի դահլիճից հեռացում, դատական տուգանք, դատախազի համար՝ տուգանք կամ դատախազին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գլխավոր դատախազին դիմելը:

Դատական օրենսգրքի նույն հոդվածով փաստաբանի նկատմամբ թույլատրելի է համարվում միայն նախագգուշացումը կամ նրան պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Փաստաբանական պալատ դիմելը:

Քրեական օրենսգիրքը, որպես պաշտպան մասնակցող փաստաբանի համար սահմանելով նաեւ քրեական պատասխանատվություն այնպիսի արարքների դեպքում, որոնց կատարելու համար մեղադրողը ենթակա է միայն կարգապահական պատասխանատվության, վկայում է, որ հողվածն ուղղված է հատկապես քրեական գործով որպես պաշտպան մասնակցող փաստաբանների դեմ եւ նպատակ է հետապնդում պաշտպանին հետ պահելու դատարանի եւ մեղադրողի համար անցանկալի միջնորդությունների, հայտարարությունների ներկայացումից, կաշկանդելու դատաքննության ընթացքում պաշտպանի կողմից դրսևւորվելիք ակտիվությունը, հասնելու անցանկալի պաշտպանին վարույթից հեռացնելուն:

Դատարանը միշտ էլ հնարավորություն ունի դատական նիստից պաշտպանի բացակայելը /անկախ պատճառներից/ գնահատել որպես չարամիտ եւ անհարգալից վերաբերմունք, արգելել միջնորդության ներկայացումը, այն գնահատելով որպես ոչ ժամանակին ներկայացված, ձայն չտալ փաստաբանին եւ այդ առիթներով նրա դժգոհությունը գնահատել որպես դատական նիստի կարգի խախտում եւ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք: Քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածի 1-ին մասը հնարավորություն է տալիս սուբյեկտիվ մոտեցմամբ պաշտպանի այս կամ այն վարքագիծը գնահատել որպես անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ եւ որակել որպես հանցագործություն քննարկվող հողվածով:

Այս հողվածով պաշտպանական կողմը մեղադրող կողմի նկատմամբ դրվում է անհավասար պայմաններում, ինչը խախտում է կողմերի հավասարության սկզբունքը: Կարելու ենք համարում այն, որ սահմանափակելով պաշտպանի իրավունքները, ուղղակիորեն սահմանափակվում են նաեւ մեղադրյալի /ամբաստանյալի/ իրավունքները՝ խախտվում է իրավաբանական օգնություն ստանալու, արդար դատաքննության սահմանադրական իրավունքը: Հիրավի իրավաբանական օգնությունը չի կարող լինել լիարժեք, եթե նման օգնություն տրամադրողը կաշկանդված է քրեական պատասխանատվության

սպառնալիքով, արդար դատաքննություն չի կարող լինել, երբ դատաքննությանը պաշտպանական կողմի լիարժեք մասնակցությունը սահմանափակված է:

Այս առումով, քննարկվող իրավական նորմն ակնհայտորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 20 հոդվածների պահանջներին:

Իրավական նորմում նկարագրված վարքագծի համար քրեական պատասխանատվություն նախատեսելը չի կարող համաչափ համարվել արարքի ծանրությանը թեկուզ հենց այն առումով, որ մեղադրողի համար նման պատասխանատվություն չի նախատեսվում: Փաստորեն, բավարար չհամարելով փաստաբանի վարքագծի քննարկումը Փաստաբանական պալատի կողմից կարգապահական վարույթի կարգով, նսեմացվում է նաեւ պալատի դերն ու նշանակությունը:

Այս առումով, տվյալ իրավական նորմը հակասում է նաեւ ՀՀ Սահմանադրության 43 հոդվածի պահանջներին:

Այն, որ պրակտիկայում տվյալ նորմը կիրառվել է կիրառվում է միայն փաստաբանների նկատմամբ, մեկ անգամ եւս վկայում է, որ այն ուղղված է հենց փաստաբանների դեմ, նորմում վկան է տուժողը թվարկված են նորմի նպատակաուղղվածությունը քողարկելու նպատակով:

Դատարանների վարույթներում այսօրվա դրությամբ կա 4 փաստաբանի դեմ հարուցված 4 քրեական գործ, որոնց դատաքննության ընթացքում կարող են ի հայտ գալ այն սուբյեկտիվ մոտեցման հնարավորությունները, որոնց համար տեղ է թողել տվյալ իրավական նորմը:

Այսպիսով առաջարկվող փոփոխությունը կոչված է ապահովելու փաստաբանի անկախությունը եւ լիարժեք դարձնելու կասկածյալի պաշտպանությունը: